Հաստատում եմ՝

տնօրեն՝ Հ. Պետրոսյան

01.09.2023թ

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

Շաբաթական 1 ժամ, տարեկան՝ 32 ժամ

Ընդհանուր նպատակները

1. Երեխաներին դաստիարակել հայրենասիրական ոգով

2. Երեխաներին հասու դարձնել բարեկրթության նորմերը

3. Ուղղորդել և հետևել, որ երեխաների աշխարհայացքը ճիշտ ձևավորվի

4. Լավ վերաբերմունք և ուշադրություն հրավիրել մարդկային բարձր որակների վրա

5. Դաստիարակել ազգային միասնության գաղափարով

6. Զինել սեփական արարքները վերլուծելու կարողությամբ

Թեման	Նպատակները	Ժամաք.

Հայկականն ու հայեցին	Կխոսեն և կծանոթանան հայկականը և հայեցին հիշեցնող ամեն ինչի հետ:	2ժ
Հայ նշանավոր ու մեծ մարդիկ	Տարբեր գրքերից և հանրագիտարաններից տեղեկություններ կիմանան հայ նշանավոր մարդկանց՝ բանաստեղծներ, գրողներ, երգիչներ, դերասաններ, աստղագետներ,, մաթեմատիկոսներ և այլ գիտության բնագավառների ներկայացուցիչների մասին:	4ժ
Հայոց քաջերն ու հայ վրիժառուները	Կսովորեն երգեր քաջերի մասին: Կխոսեն հայ ժողովրդի անցած դժվարին ուղու մասին, պատերազմների և դրանց ժամանակ իրենց իսկական քաջորդու նման դրսևորած իսկական հայերի մասին:	4ժ
Հայոոց մայրաքաղաքների, թագավորների մասին	Կխոսվի հայոց մայրաքաղաքների մասին, հնարավորության դեպքում համակարգչով պրեզենտացիայի ցուցադրում: Հայոց թագավորներն ու նրանց գործը:	2ժ
Հայոց հրաշալիքների մասին (տեսարժան վայրեր)	Գրքերից, համակարգչից և հանրագիարանից կծանոթանան Հայաստանի գեղատեսիլ վայրերին ու նշանավոր կոթողներին:	2ժ
Գաղափար երջանկության մասին	Գաղափար կկազմեն երջանկության մասին: Կհասկանան, որ յուրաքանչյուր մարդ յուրովի է ընկալում <<երջանկություն>> ասվածը, որ դա շաատ հարաբերական է: Երեխաները կհասկանան, որ ամենափոքր հաջողության մեջ, բարի գործի մեջ անգամ կա հոգևոր մեծ երջանկություն, դա պիտի տեսնել և ընդունել:	2ժ
Հյուր գնալ, հյուր ընդունել: Պահվածք սեղանի շուրջ	Կծանոթանան հայկական հյուրընկալությանը, առածներ և պատմություններ այդ մասին: Բարեկրթության նորմերին կծանոթանան, կլինեն բարեկիրթ, հյուրընկալ և բարեկիրթ հյուր գնացող:	2ժ
Օգնել միմյանց, բարի լինել ու կարեկցող	Երեխաները կսովորեն սատարել և օգնել միմյանց: Հոգեկան բերկրանք կստանան օգնության կարիք ունեցողին ձեռք մեկնելիս:	3ժ
<<Միասնությունը ուժ է >>	Կընթերցեն տարբեր առակներ, պատմություններ և այլ ստեղծագոնծություններ միասնության մասին: Կհասկանան, որ հայերին դա հույժ անհրաժեշտ է եղել, կա ու կլինի:	3ժ
Ինչպիսի՞ն եմ ես (բամբասկոտ, կամակոր, բարի, ագահ, կամեցող և այլն)	Ճիշտ իքնաքննադատության և իքնագնահատականի ձևավորում: Օգնել նաև այնպիսի երեխաներին, որոնք թերագնահատում են իրենք իրենց: Բարձրացնել նրանց ինքնագնահատականը:	4ժ

	Բացատրել և երեխաներին հասու դարձնել, որ առաքինությունն ու լավ մարդ լինելը բոլորովին էլ սխալներ բնավ թույլ չտալու մեջ չէ, այլ ավելի շատ սեփական սխալը խորը գիտակցելու, այն ուղղել ցանկանալու և այլևս այդպիսի բան չանելու մեջ է: Հասկացնել, որ միջավայրում սխալ է այն պատկերացումը, որ սխալը գիտակցել և ներողություն խնդրելը դա ամոթ է: Ո՛չ, դա ավելի է բարձրացնում անձի ունեցած արժենքները: Այս ամենում կհամոզվեն համապատասխան ստեղծագործությունների և իրական պատմությունների միջոցով:	
Ինքնաբնութագիր	Սեփական անձը ուսումնասիրելուց հետո կփորձեն անկեղծորեն բնութագրել իրենք իրենց:	2ժ
<<Ուզում եմ, որ...>> վերնագրով շարադրությունների ընթերցում և քննարկում	Դասղեկի ժամերի անցածը իմի կբերեն, կընդհանրացնեն: Յուրաքանչյուրը յուրովի կփորձի ներկայացնել իր երազանքն ու ցանկությունը: Կաշխատեն, որ սեփական ցանկությունները շատ վեր չդասեն ընդհանուրի շահերից:	2ժ